դիմաց, կը շինէ մեծ «ծովակ» մ'եւս, լայնարձակ և պարսպաւոր, ծառուտ և գեղեցկավայել (42)։

Երեւանի Խանը՝ Լազկի Սեֆի–Ղուլի, զբօսանքի մը պահուն, կը տեսնէ այս «ծովակ»ը և կը ցանկայ զայն ունենալ։ Եւ որովհետև Կաթողիկոսը Կ. Պոլիս կը գըտնըւէր, կը դիմէ Աթոռակալ Մատթէոս Վարդապետին և կը խնդրէ «ծովակ»ը։ Աթոռակալը կը պատասխանէ. «ոչ կարեմ տալ, զի տէր դորա է յաշխարհին հայոց»։ Զայս լսելով, Խանը շատ կը տխրի։ Եւ երբ Կաթողիկոսն իր Աթոռը կը վերադառնայ, Խանը՝ զբօսանքի մը պահուն, դարձեալ կը խնդրէ «ծովակ»ը. Կաթողիկոսը կը պատասխանէ. «Զիա՞րդ տաց զնա քեզ, քանզի կեանք մեր և կենդանութիւն՝ նա է ի տեղի սերմանելոյ, և հանգստարան միաբանից մերոց»։ Խանը կ'առաջարկէ որ զայն այլի մը հետ փոխանակէ և կամ ծախէ։ «Մեք, կը յարէ Կաթողիկոսը, զնա վազմ(նուէր) արարաք Էջմիածնի, այլ ո՛չ գոյ հնար ելանել նմա իդրանէ նորա»։ Խանը այ աւելի կը տխրի, որովհետև երկիցս մերժումի բախած էր. այնուհետև կը թշնամանայ Կաթողիկոսին հետ ու զայն կը նեղէ անդադար, մինչև որ Յակոբ Ջուղայեցի կը յաջողի զայն պաշտօնանկ ընել տալ (43)։

(42) Անդ, 199։

(43) Ջաfարիա, 76· Ջամբռ, 156, 199։